



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




1684

$\frac{17}{R-16}$

1234.

2010

2001



ՔԱՂԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՌՕՏ




ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻԻՀԵՆՏԵՍԵԱՆ

= Ռ Յ Ա =

17

R-16



ԲԱՆԱԲԱՆԱԲՈՒԹԻՒՆ

ՀԱՄԵՌՕՏ



ՔԵՂԱՅԵՎԱԿԱՐՈՒԹԻՒՆ

17

ՀԱՄԱՌՕՏ


Բ-16

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

4.

Ի ԳԱՂՂԻԱԿԱՆԵ Մ. ԱՂԱԹՈՆԵԱՆ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Տ. ՅԱԿՈՎԲԱՅ ԱԶԳԱՍԵՐ

ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻ ՀԵՆՏԻՍԵԱՆ

9060-III



1047

39

# ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքավարութիւնը ի՞նչ է :

1. ԽՍՕՍՔԴ՝ խօրաթաղ ու գործ-  
քրդ ճամբով ընես նէ՝ անոր կ'ըսուի  
Քաղաքավարութիւն :

2. Քաղաքավարութեան կանոննե-  
րը բնաւ չի ճանչցող մարդը իր գըտ-  
նուած քաղաքին սովորութիւններուն  
մէջը պահասութիւն ընելով ատելի  
կ'ըլայ ամենուն :

3. Պահասութիւններնիս չերեւցը  
նելու համար ամեն գործքերնուս վը-  
րայ պէտք է աչուընիս չորս բանալ .  
պէտք է նաեւ ուրիշին պահասութիւն  
ներել . ամեն մարդուն իր տարիքին ու  
իր աստիճանին վայելիք յարգը պա-  
հել . ամենուն բարի կամենալ . բայց  
նայելու ենք որ կամեցածնիս գէշ բան  
չըլայ տէ՛ մենք աղէկ կարծած ըլլանք .  
ահա՛ ասոնք են քաղաքավարուէ , կամ  
սանկ ըսեմ մարդավարութեան մեր ա-  
մեն մէկէն պահանջած գլխաւոր բա-  
ները :

4. Խօսքերնիս ու գործքերնիս լըսող տեսնողներուն մեզմէ գանգատելու առիթ մը չտալու համար՝ զգուշութիւն մը կայ որ կ'ընենք. ահա ան է մարդավարութիւնը կ'ըսէ | ապրիւ էր :

Մարդավարութիւնը շատ առաքինութիւններուն պակասութիւնը կըրնայ լեցընել, վասն զի՝ շատ անգամ ընելիք բաներնուս դէմ կը կենայ, գէշ սովորութիւններնուս ետ կը ձգէ մեզ, չափել կըլուել կուտայ մեզի խօսքերնիս, ու գործած բաներնուս տակէն օգուտ կը հանէ ընկերներնուս :

5. Մարդավարութիւնը երկուք կը բաժնուի. մէկին կ'ըսուի սրտանց մարդավարութիւն, որ քրիստոնէական կամ բարոյական առաքինութիւններէն առաջ կուգայ, այսինքն՝ խոնարհութենէն, աստուածսիրութենէն, պարկեշտութենէն, ու բարեսիրութենէն. մէկալին ալ՝ երեսանց մարդավարութիւն կ'ըսուի, որ անձնասիրութենէն, փառասիրութենէն ու շահասիրութենէն առաջ կուգայ :

6. Առաքինութեամբ մարդավար եղող մարդը բնաւ կուպիտ բաներ չընէր, իր ամենպակասութիւնը կը ճանչնայ, անոր համար շատ պարկեշտ կ'ըլ-

լայ, ուրիշին յանցանքը կը ներէ . բայց իրեն էն պզտիկ յանցանքը անգամ չուզեր ներել : Երեսէր ըլլալուն ուրիշները միշտ կը ջատագովէ ու զանոնք պատուելու արժան բան մը կը գտնայ վրանին . ինչ աստիճան մարդ է, ինչ հանգամանք ունի արդեօք, ասոնք չի փրնտըուեր . որին ըլլայ նէ՛ սրբտանց գործը կը տեսնայ :

7 . Իր բանին ելլալիքին համար մարդավարեղօղը՝ սնապարծ, ինքնահաւան ու անձնասէր կ'ըլլայ . մէկը սիրէ, յարգէ կամ անոր երախտիք մը ընէ՛նէ, իր օգտին համար է մինակ . բարեկամութիւն խոստանալները, ցուցուցած փոյթերը, (խրընմիշ ըլլալները) ըրած մեծարանքները՝ հա՛ խեղդպցող մոմէ շինուած արձանի մը վերայ տեսեր ես, հա՛ աս մարդուն վերայ :

8 . Իրաւ որ պէտք չէ աս վերինին պէս մարդավար մարդուն նմանելու ջանալ, բայց աս ալ կայ որ՝ անանկ մարդու երեսէն այնչափ վտանգ չի տեսնուիր, այնչափ չի զզուիր մարդ՝ որչափ մէկ բիրտ՝ կոշտ ու ազտեղի տղի մը երեսէն :

9 . Երեւելի հեղինակին մէկը կ'ըսէ որ, աս լուսաւորեալ դարիս մէջը

անբաղաքավարութեան պակասութիւնը  
 ունեցողը մէկ ուրիշ պարծենալու մեծ  
 հանճար մը ( հիւնէր մը ) պիտի ունե-  
 նայ՝ որ գայ ան պակասութիւնը ծած-  
 կէ : Բայց մարդավարութիւնը մէկին  
 կամքին մինակ յանձնընկն մըն է . շատ  
 բընական ձիրքերուն տեղը կը բռնէ .  
 հարուստը ու աղքատը պատուոյ տէր  
 ընող՝ ծերը ու երիտասարդը միօրինակ  
 գեղեցիկ երեւցնող կատարելութիւ-  
 նը տղայոց վրայ տեսնալէն մարդ շատ  
 կ'ախորժի :

Ինքոր քունէն ելլալու է ատարանցները ,  
 Ինքոր աղօթք ընելու է , մարդ-իւտան համար  
 Ի՞նչ հոգ պէտք է փանիլ , պատկելու արեւն Ի՞նչ  
 պարտք իայ կատարելու :

1. Օրուան ամեն մէկ վայրկեանին  
 մէյմէկ պարտք կը դնէ մեզի քաղաքա-  
 վարութիւնը , անկողինէն ելլելնուս  
 բռնէ տէ՛ ամեն գործքերնիս քաղա-  
 քավարութեամբ պիտի ըլլայ :

2. Տղայ մը դեռ անկողինէն չե-  
 լած իր սիրտը Մատուծոյ պիտի նուի-  
 բէ , ու Մատուծոյ պիտի աղաչէ որ  
 շնորհքը իր վրայէն բոլոր օրը անպա-  
 կաս ընէ՝ որ իրեն դրուած պարտքերը  
 անզն ՚ի տեղը կատարէ , ու աւելի յօ-

ժարութեամբ գործել ուղած պակաս  
սութիւններէն ետ մնայ, ահա՛ աս է  
մէկ տղին առաջին պարտքը՝ անկողի-  
նէն դեռ չելած :

3. Ըս ծառայութեան ու շնորհա-  
կալութեան առաջին հարկը Ըստու-  
ծոյ վճարելէն ետքը, շուտ մը անկո-  
ղինէն պիտի ելայ ու որչափ որ հնար  
է նէ՝ վայելչութեամբ հագովի : Ըս  
պիքով կենալը, կուրծքը՝ սրունքները  
ու ուրիշ գոց պահելու տեղուանքները  
բաց թողընելը, գուլպաներուն կա-  
պիչները մարդու առջեւ կապելը ան-  
շնորհք բան է, մանաւանդ աղջիկնե-  
րը զգոյշ պիտի կենան աս պակասու-  
թիւնները չի գործածելու, վասն զի  
անոնց՝ տղաքներէն աւելի ամօթ է :

4. Երեսդ՝ աչքդ՝ բերանդ՝ ձեռքդ  
զանց մի առներ, լուս՝, ականջներդ  
առ զայներդ մաքրէ՛, մազերդ սանտրէ՛,  
եղունգներդ կտրէ՛, լաթերդ փոշիտ  
( թողոտ ) մի ձգեր, նայէ՛ որ հագած-  
ներուդ վրայ պատուած, քակուք, բիծ  
չըլայ, գուլպաներդ վար չիյնայ, ու  
ոտքիդ ամաններն ալ մաքուր ըլլայ,  
վերջապէս անանկ հագովէ՛ որ քեզ տես-  
նողները սա տղին վարքը աղէկ պիտի  
ըլլայ ըսեն :

5. Հոս պատուիրած բաներէս ա

ւելի առողջութեան օգուտ բան չըլլար . որ մը աս պատուիրած բաներս տղայ մը զանց առնէ նէ , ան տղայէն ամեն մարդ կը գանի , ու անոր ասանկ անչնորհք հագվելը տեսնողը կ'սկըսէ գէշ կարծիքներ ալ ընել անոր վրայ . աս բանը ան տղին ծուլութեանը կամ ուրիշ արտաքին կամ ներքին պակասութիւններուն կուտայ :

6 . Հագվելուդ պէս կայնէ , ձեռքըդ բարեւ բռնած ու ամփոփ մըտքով աղօթքդ ըրէ , թէ քու՝ թէ ծընողքներուդ հոգւոյ փրկուէր՝ մարմնոյ պիտոյքներուն հարկաւոր եղած շնորհքը խնդրէ Աստուծմէ :

7 . Աղօթքդ լրմնցունելուդ պէս գնա՛ հօրդ մօրդ ձեռքը պսպ , և ի՛նչ որ քեզի պատուիրել կ'ուզեն նէ՝ աղէկ մտիկ ըրէ , ու պատուիրածնին քեզի թեթեւ ալ երեւայ , ծանր ալ երեւայ մտադրութեամբ կատարէ :

8 . Պառկելու ատենը գալու ըլլայ նէ՝ ծնողքներէդ հրաման չառած մի քաշվիր երթար քովերնուն . առտուանին պէս աղօթք ըրէ , վայելուչովք հանովէ , լաթերդ ալ մաքրէ՛ ծալէ՛ ու տեղը դիր :

9 . Պառկած ատենդ աջ կողմիդ վըրայ պառկէ , չըլլայ որ երեսիդ կամ

կանակիդ վրայ պառկիս , առողջութի  
 մնաս է . ու սկսէ ցերեկուան բոլոր  
 բրածներըդ մտմբտալ :

10 . Սէկ գէշ բան մը գործեր ես  
 նէ՛ Մտուծմէ ուղիղ սրտով թողու-  
 թիւն խնդրէ , ու խօսք տուր Մտու-  
 ծոյ՝ որ մէյ մըն ալ անանկ ամբնալու  
 գործ չի գործես :

Եկեղեցի՛ն Ի՞նչպէ՛ս Խայնելու է :

1 . Մտուծոյ խօսքերը իրեն պաշ-  
 տօնեայներուն բերնէն լսելու համար  
 սուրբ տեղ մըն է եկեղեցին . հոն  
 Յիսուս Քրիստոս քեզի կ'ըսպասէ՝ որ  
 երթաս պէտք եղած յարգդ պատիւդ  
 անոր վճարես , եկեղեցին պիտի մըտ-  
 նաս մի միայն քեզի դրուած պարտքե-  
 րը կատարելու համար :

2 . Թէպէտ ամեն տեղ Մտուծոյ  
 առջեւն ես տէյի կը սեպուիս , բայց  
 առաւել եկեղեցիին մէջը , ուրեմն ան  
 տեղ հրբան պարկեշտութեամբ կենաս  
 նէ՛ քիչ է :

Վրուխդ առջեւդ ծռէ՛ , խելքդ  
 բոլորտիքդ անցած բաներուն մի տար :

3 . Պատարագին կամ ուրիշ եկե-  
 ղեցական հանդէսի մը գտնուիս նէ՛  
 կամաց զրուցէ աղօթքդ որ քովի կայ-

նողըդ իրեն ազօթքը չի սխալի . չըլլայ որ լեզուիդ իննաս խօրատեսս , կամ ազօթքէդ ելել ուրիշ բանի մը խելքդ տուեր ես տէյի դուն քեզ ցըցունես . ասով ուրիշին տուած գայթակղուիդ աններելի է :

4 . Քարողի ժամանակ ուշադրութեամբ մտիկ ըրէ՛ , որ քարողիչին ըսածներէն բան մը չի փախցունես . ու ան որ երկրիս վրայ Աստուծոյ փոխանորդ ըլլալով քեզի ինչ որ կը պատուիրէ կորնէ կատարես :

5 . Անն եկեղեցի երթալուդ տաճարին վրայի խաչը մէյ մը համբուրէ , ու վայելուչ կերպով մը երեսդ խաչակրնքելէդ ետքը՝ ներս մտիր :

6 . Քրիստոնէական վարդապետութիւնը դաս առած ատենդ մեր սուրբ կրօնքին վերաբերեալ որքան բաներ կան նէ՛ սորվէ՛ :

Սեր Ռոյա-որին Ի՞նչ պարպատրուիւն  
ոանխն՞ :

1 . Սերձաւոր ըսելով կ'իմանամք առ հասարակ ամեն մարդ . այսինքրն մեզմէ վերերը , մեզի հաւասարները ու մեզմէ վարերը : Աստուծոյ առջեւը ամեն մարդ մէկ է , անոր համար

Աստուծոյ հաճելի ըլլալ կ'ուզեմք նէ՛ պէտք է որ անոնք անխտիր սիրենք ու անոնց օգնենք, ինչպէս սա աւետարանական առածը մեզի կը սորվեցընէ՛ « Արպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասցիք և դուք նոցա » :

2. Աստուծոյ պատուիրանքներուն մէկն ալ աս է որ՝ մեր մերձաւորը մեր իսկ անձին պէս սիրենք. կրնայ մի մէկ մարդ մը իր նմաններուն ունեցած պարտքը չի կատարել, . . . ներէ՛ ուրիշին պակասութիւնը, վասն զի շատ ատեն ալ դուն՝ ուրիշին քեզի ներելուն կարօտ կ'ըլլաս :

3. Չափազանց գինի կամ ուրիշ ու գելից ( ուռհի տայիր ) բաներ խմելով խելքը գլխէն գացած խայտառակ տեսարան մը եղող մարդուն վրայ խնդացող անկիրթ տղաքներուն մի նմանիր . հասպա՛ աս ալ ինձի պէս մարդ է, ու հիմա անասուններուն կարգն է մտեր ըսելով՝ մեղքըցիր անիկայ :

4. Մի խնդար մերձաւորիդ ան պակասութիւններուն վրայ որ շտկելը իր ձեռքը չէ՛. միտքդ բեր որ շատ տգեղ, կաղ, սապաւոզ ( խամպուռ ) մարդիկ արտաքին պակասութիւններնուն տեղը ներքին կատարելութիւններ ունին :

5. Ասոր համար է որ գեղեցիկ երիտասարդներուն ու աղջիկներուն շատը անխելք հպարտ ըլլալնուն ու գէշ վարք ունենալնուն համար մարդ չի կրնար անոնք քաշել տէ՛ շատ ատեն գրեթէ կ'երթայ բնութեանը պակասաւոր ստեղծած մարդիկը կը փրնտըուէ :

6. Չըլլայ որ մէկին խօրաթուածքը կամ շարժուածքը խաղը առնես . վասն զի ծաղը բրած մարդդ իմանալու ըլլայ նէ՛ այնչափ կը ցաւի որ՝ անոր նախատական ( բռզի դպչելու ) խօսքերընէիր նէ այնչափ չէր ցաւեր :

7. Մերձաւորիդ օգնէ՛ , գլխուն գէշութիւն մը եկած ատենը ցաւակից եղիր անոր , մխիթարէ՛ անիկայ որ օրհնենք առնես :

8. Ալքատի մը ողորմութիւն տալու ատենդ սրդողելով մի տար , որ ալքատն ալ քեզմէ ողորմութիւն ուղեւուն չի զղջայ . ձախորդութեան գալով , կամ տկարութեան պատճառաւ մարդու ձեռք բանալու երեսը դիմացընող մարդը գիտե՞ս , ինտոր պիտի մեղքընանք :

Օ՛նողաներնոսս ու վարժապետներնոսս ու քո  
լըր Տեճատեճ Տարդիկներոն ի՛նչ պարտա-  
րո-թի-ն ունինք :

1. Քեզմէ մեծը պատուէ . պատ-  
ուէ վարժապետըդ , հնազանդ ու ե-  
րախտագէտ եղիր անոր , սէր ունե-  
ցիր վրան . ասանկ ալ հօրդ մօրդ ու  
բարերարներուդ . և դիր անոնց սի-  
րուն քու անձդ :

2. Աշխարհքիս մէջը հայրդ մայ-  
րդ Աստուծոյ փոխանորդ են քեզի ,  
մանկութիւնըդ կը խնամեն , քեզի  
կրթելու կը ջանան , ու անդադար  
կ'աշխատին որ կեանքըդ երջանկու-  
թեամբ ու քիչ աշխատանքով վարես  
աշխարհքիս մէջը :

3. Անոնց հնազանդ երեւնալու  
համար ինչ որ քեզի կը պատուիրեն նէ  
շուտով կատարէ . թէ որ տրտընջաս  
կամ պատուիրած բաներնին չընես նէ՝  
կը մեղանչես , անոնց սիրտը կը կոտ-  
րես , պարտքդ չի ճանչցած կ'ըլլաս՝  
ու քու շահիդ ալ փնաս կը բերես :

4. Օ՛նողքներուդ ի՛նչ պարտք ու-  
նիս նէ կատարելով , խոնարհութեամբ  
անոնց հետ խօսելով , քանի որ դուր-  
սէն կուգաս նէ՝ ձեռքերնին պագնե-  
լով՝ պատուէ անոնք , սրակասութիւն

ներնին ծածկէ՛, մի ըսեր . մանաւանդ  
անոնց պակասութիւնն մի գտնար , վա-  
սըն զի՛ Մտուած ըսաւ որ՝ « Պատ-  
ուեա՛ ըզ հայր քո և զմայր » :

5 . Կրտստագիտութիւնդ՝ սէրդ  
ու բարեկամութիւնըդ անոնց ցը-  
ցունելու համար՝ հիւանդ ըլլան նե՛-  
կրրցածիդ չափ հոգ տար անոնց վը-  
րայ . երբոր ծերութեան կամ ուրիշ  
վիճակի մը մէջ գըտնուելով օգնու-  
թեան կարօտ կ'ըլլան նե՛՝ գործքեր-  
նին տե՛ս , ու որչափ քեզի ձեռք կրը-  
նայ տար նե՛՝ անոնց պիտոյքը հու-  
գա՛ :

6 . Ինաւորութեանըդ գէշու-  
թիւնը ու կրթութեանդ թերութիւ-  
նը ցըցուցած կ'ըլլաս , երբոր ծնող-  
քրդ , վարժապետդ , մեծդ քեզի բան  
մը կը հարցունէ ու անշնորհք պա-  
տասխան կուտաս . յանցանք ունիտ  
նե՛՝ լռէ՛ մէյ մըն ալ մի գործեր ան յան-  
ցանքը . իրաւունք ունիս տէյի քեզի  
կ'երեւայ նե՛ , պարկեշտութեամբ ար-  
գարացո՛ւր դուն քեզ՝ ետքը լուռ առ-  
ջեւդ նայէ՛ :

7 . Տղայոց դասատու տէյի դրուած  
մարդը անշուշտ յաջողակ՝ առաքինի  
ու ընտրեալ մարդ է . անոր համար  
անոր քու վրադ ունեցած խնամքը՝

աշխատութիւնը քիչ բանով չէս կըր-  
նար փոխարիներ :

8 . Թէ ազնուականութենէդ թէ  
բարեբաղդու թէնէդ աշխարհքիս մէ-  
ջը ի՛նչ մեծ աստիճանի կը հասնիս նէ՛  
հասիր . միտքէդ մի հաներ քի՛ հօր-  
մէդ մօրմէդ ետքը քու ուսուցիչդ ա-  
ւելի պիտի մեծարես ու անոր երախ-  
տագէտ պիտի ըլլաս :


9 . Ի՛նչ որ քեզի կը պատուիրեն նէ՛  
չտիէ շիտակ կատարէ , պատիժ մը տան  
նէ՛ տրտունջ չընելով կրէ՛ , ու շաղթու-  
թեամբ խրատնին մտիկ ըրէ՛ , տուած  
դասերնուն օգուտ քաղէ , ու որ պա-  
կասութիւններուդ համար մ՛ըներ  
տէյի քեզի կը սրդողին նէ՛ նայէ՛ որ  
չըտկես ան պակասութիւնները :

Կարգաւորները ծերերը — Բոլոր պատու-  
որ հարդիլը ինք՞ր պատուելո՛ւ է :

1047  
39

1 . Կարգաւորները պատուէ՛ ա-  
նոնք պատուելովդ Աստուած պատ-  
ուած կ'ըլլաս , վասն զի՛ Աստուծոյ ըս-  
պասաւորները ու փոխանորդներն են ,  
ու իրենց պաշտօնին պատճառաւը  
Աստուծոյ առաւել մերձաւոր կը սեպ-  
ուին :

2 . Չը անձ կ'երեւայ որ՛ ծերուիլը



մէկ պատկառելի բան մըն է, անոր համար տղաքները ինչխտարձեբը պատուեն նէ՝ քիչ է, ամեն ատեն՝ էն մեծ պատիւը ծերերուն ընելու է, ամեն հնարաւոր գործքերնին տեսնալու է, անոնց ծերութե սրահասութիւններուն սիրով համբերելու է, մանաւանդ վերանին ամենեւին խնդալու չէ :

3. Դողալով միշտ մտածէ որ՝ օր մըն ալ դուն պիտի ծերանաս, հայրըդ մայրդ ծերացեր են, աս մըտածելով դուն ծերերը մի՛ ծաղրեր, որ ուրիշ աներես տղաքներ ալ քու հայրըդ՝ մայրդ չի ծաղրեն, ու քու ատենիդ տղաքներն ալ քեզ չի ծաղրեն :

4. Ո՛վ որ տարիքով իրմէ մեծ մարդուն առջեւը պարկեշտութեամբ ու ակնածութեամբ չի շարժիր նէ՝ իրեն անկիրթ մնալը կը ցուցունէ, յարգոյ ծերին երեսն՝ ի վեր ծաղրող անըզգամին քովը մի՛ կենար, փախիր, վասն զի՝ անանկ տղան բիրտ է՝ ու երեսին ջուրը փախած է :

5. Տարիքով կամ պատուով քեզմէ վեր մարդ մը քու գտնուած տեղըդ գայ նէ՝ ոտքի վրայ ելիր, մինչեւ որ հրաման չի տայ նէ՝ մի՛ նստիր, բան մը հարցունէ նէ՝ խոնարհութիւն ըրէ անոր՝ ետքը պարկեշտութեամբ

ազատասիրան տուր :

6 . Մարդավարութիւնը մարդու օ մէկ օտոնցուածք ( վարիէթ ) մըն է տէ յի գիտցիր . որչափ որ անիկայ ա ղէկ բըռնես նէ՛ այնչափ շահ կը տես նես անկէ :

7 . Հետը մարդավարութեամբ վարուած մարդը՝ իրեն ըրած պատիւ ներուդ արժանաւորութիւն ունեցեր չէ՛ ունեցեր՝ հոգ չէ՛ . որովհետեւ բա րեկիրթ մեծնալուդ դուն ուրիշ կերպ չէիր կրնար վարուիլ անոր հետ . գիտ ցիր որ միշտ օգուտ կը տեսնաս ա սանկ գովելի վարմունքներէդ . ասոր համար մէկ մարդ մը թէ՛ սոսկ մար դոց հետ , թէ՛ երեւելի մարդոց հետ որչափ առաւել յարգանօք կը կենայ նէ՛ այնչափ իր ունեցած աղնիւ հան քամանացը յարգը կ'եւելցունէ :

Կերակուրի ժամանակ սեղանի վրայ  
ի՛նչպէս շարժելու է :

1 . Սեղանին նա՛ կողմը նստէ ալ ըսեն նէ՛ դուն մի նստիր , համբերէ՛ որ մէկալ սեղանակիցները ինտոր պի տի նստին նէ՛ դուն ալ տեսնաս տէ անանկ նստիս . ու անձեռոցքդ ( բէճ կիրդ ) բանալու մի արտորար :

2. Կերակուրի չսկսած հայմերըք ըսէ՛ , կերակուրէն ելլալու ատենըք ալ , չելած՝ հայր մեր մին ալ ըսէ՛ , փառք տուր Աստուծոյ՝ անանկ սեղանէն ելիր . բայց աս պարտքդ ցած ձայնով կատարէ որ մէկալներուն ազօթքը չի խափանես և ամենքը քեզի չի նային :

3. Անշանէն նէ խիստ շատ հեռու նստէ , նէ խիստ շատ մօտ . շիտակ կեցիր աթուռիդ վրայ . արմուռն կըդ ( տիրսէկըդ ) սեղանին վրայ մի հեծցըներ . մի միայն դաստակդ ( պիւլէկըդ ) սեղանին վրայ դիր . կերակուր կերած ատենըդ անվայելուչ շարժմունքներ մի ըներ :

4. Դանակըդ , պատառաքողդ , դըգալըդ , բիւլադ ալ կողմդ դիր , հացըդ ձախ կողմդ . բաժակըդ ( խատէխըդ ) ալ ալ ձեռքիդ դիմացը . երբոր դդալդ՝ ալ պէտքը չէ՛ նէ՛ բիւլայով ետ տուր :

5. Դանակդ միշտ ձեռքըդ մի բըռներ , բան մը կըտրելէդ ետքը սեղանին սրվուոցին վրայ դիր , մէյմըն ալ նորէն պէտք ըլլայ նէ ձեռքըդ առ :

6. Այլ դանակին ծարսիլը ան , ետքը ծարր սրբէ . քեզի մտեղէն կամ ընդեղէն ( զահրէտիլ ) կերակուր մը

կամ սեր ( խայմախ ) կամ ուրիշ հեղուկ ( սուլու ) բան մը տալու ըլլան նէ՝ աջ ձեռքովդ տուածնինն առ , ձախ ձեռքովդ ալ առջեւի բիւխար տուր , հաւկիթ պտուղ կամ ինչ չոր բան առնելու ըլլաս նէ՝ ձեռքովդ առ :

7. Կերած բանիդ փուշերը , ու կորները , ու ինչ որ չի ուտալիր ու չէս ուզեր ուտել նէ , բիւխարի մէջը մէկ քովը դիր , կերած պտուղիդ կուտերը մատիդ ծարովը բերնէդ առ , չըլլայ որ ձեռքիդ կամ բիւխարի մէջը թուքնելու պէս բերնէդ հանես նետես :

8. Չըլլայ որ բիւխար բերանդ առնես տէ՛ մէջի միսի ջուրը խրմես , պիտի խմես նէ՝ դդալովդ խմէ . թանրդ ( չորպագ ) շատ տաք է նէ բերանովդ չի փչես . դդալովդ կամաց կամաց խառնէ որ պաղի . ուրիշ կերակուրներըն ալ մի փչեր պաղե տէյի :

9. Սիսին կամ կերակուրին ջուրը Ռապախին կամ բիւխարին մէջէն դդալիդ մէջը մի կորզեր տակը կաթիլ մըն ալ չի թողցունելու մտքով . բիւխար ալ հացով մի սրբեր , ու դդալիդ չեկած քանը բիւխարի մէջը թողցուր :

10. Հացդ մի խածներ , սեղանին սիւռոցին վրայ ալ մի կարեր , որքան որ պէտք է նէ այնչափ փրցուր ամեն

մէկ անգամին, խնձորն ալ տանձն ալ մի խածնէր՝ դանակով կտրէ, կերած աստենրդ ալ դանակը ձեռքէդ վար գիր :

11. Սեղանի վրայ սպասաւորութիւն ընելու պէտք ըլլայ քեզի նէ՝ մէկը քեզմէ հաց ուզէ նէ բիւթայի մէջ գիր, անանկ տո՛ւր, ձեռքով մի տար. խըմելու բան մըն ալ ուզեն նէ՝ նայն պէս բաժակը (խատէխը) բիւթայի մէջ գիր, անանկ տուր. ուզող մարդը բաժակը ձեռքը առնելուն պէս բիւթան մէկ դի առ. դանակը, պատառաքաղը, դդալը մէկուն տաս նէ կոթը առնոր դարձուր :

12. Բիւթաները փոխող մարդը միշտ պիտի նայի որ սեղանակիցներուն մէջէն էն մեծը ո՛վ է նէ՝ անկէց սկսէ փոխել, ու ետքը սեղանին բոլորտիքը պըտըտելով պէտք եղողինը պիտի փոխէ խըտորութիւն չընելով :

Ուրիշ քիչ բան պէտք է նայելու սեղանին վրայ :

1. Ա՛յ խիստ արտորնօք կէր, նէ խիստ ծանր, մէկ պատառդ վար չի գացած մէկալը բերանդ մի դներ. նա Ա՛յ որ չըթուէրներուդ ծամելիքնե-

րուդ ձայնը չելլէ՛, դգալիդ ու պատա-  
 ռաքաղիդ վրայ բերանդ որքան բան  
 կրնաս դներ նէ՛ այնչափ բան ան :

2 . Ուրիշէն առաջ քեզի բան տան  
 տէյի Բիւլտար երկնցունելդ , քովի նըս-  
 տողիդ Բիւլտային մէջ ի՛նչ կայ տէյի նա-  
 յելըդ , տուած բաներնին հոտուտա-  
 լըդ , անկ կտորը չեմ ուզեր նա՛ կրտո-  
 րը կ'ուզեմ ըսելդ մեծ անվայելուչ բան  
 է . բայց ո՞ր կտորը կ'ուզես տէյի քե-  
 ղի ըստիպեն նէ , ան ատենը ուզած կը-  
 տորդ առնես նէ՛՝ զէն չունի :

3 . Երբոր հաւեղէն կամ ուրիշ կը-  
 տրտած կերակուր մը կը բերեն Բա-  
 պախով առջեւդ նէ՛՝ որկրամոլ մարդոց  
 պէս կակուղ կամ խոշոր կտորները մի  
 զատեր :

4 . Չեռքիդ պատառաքաղովը սե-  
 ղանին մէջ տեղի կեցած Բապախին բան  
 առնելը , մատուրներդ , պատառաքա-  
 ղըդ , դանակդ լղելը , մարդու սիրտ  
 գանեցընելիք բաներ ընելը , ասոնք ա-  
 մենն ալ մեծ անքաղաքավարու թեան  
 նշաններ են :

5 . Ի՛նչ կերած ատենդ՝ բերանդ  
 շատ մի բանար , որ ծամածդ մարդ  
 չի տեսնայ . Բիւլտային մէջի եղած բանին  
 վրայ մազ մը , ժժմուկ մը , կամ մէկ  
 գանելու բան մը ըլլայ նէ , զգուշու-

Թեամբ ան , վերցնւր անիկայ ու դիր  
Բիւլայիդ մէջը մէկ քովը՝ որ մարդ չի  
տեսնայ տէ՛ ան ալ քեզի հետ գանի :

6 . Պատահաբար բերանդ բան մը  
դրիր տէ՛ նայեցար որ քեզի գէշ կ'ը-  
նէ կոր , Բեչիւրիդ բերանդ ծածկէ՛ ա-  
նանկ բերնէդ հանէ՛ ան բանը՝ ու Բի-  
ւլայիդ մէջը դիր , որ մարդ չի տեսնէ :

7 . Թէ Բիւլային մէջը՝ Թէ սեղա-  
նին մէջ տեղը դրուած Խապախին մէջը  
բան մը կտրելու ըլլաս նէ , նայէ՛ որ  
նէ քովիններուդ վրայ կերակուրի ջուր  
ցաթկեցունես՝ նէ քու վրադ :

8 . Աղաներդ դանակովդ կամ պա-  
տառաքաղովդ մի խառներ . ոսկորին  
մէջի ուղեղը ( իլիկը ) հանելու համար  
Բիւլայիդ վրայ մի զարներ . առղայով  
կուտ մի կտորեր , ու նայէ՛ որ բերա-  
նրդ լեցուն իբէն չի խօրաթես :

9 . Կերակուրը սանկ է եղեր՝ նանկ  
է եղեր տէյի բան մը մի ըսեր . Թէ որ  
ինտոր է եղեր կերակուրը տէյի քեզի  
հարցունեն նէ՛ նայէ՛ որ որքան կրնաս  
նէ գովես :

10 . Նայէ՛ որ՝ որ կերակուրէն ա-  
ւելի կ'ախորժիս՝ որ կերակուրէն չէս  
ախորժիր չիմացունես : ( ) րինակի հա-  
մար՝ մի ըսեր ես կովի միս չեմ ուտեր ,  
ես խողի ապուխտի ( պաստրմայի ) հոտ

չեմ կրնար առներ , ֆասուլեան ինծի կը դպչի , խորոված միսը (քէսպպը ) կը սիրեմ , հաւեղէն կերակուրէն աւելի կ'ախորժիմ քան թէ ոչխարի միսէն :

11 . Թէ որ կերակուրէ մը ամենեւին չէս ախորժիր նէ , նայէ որ չախորժելդ մարդու չի զրուցես . ան կերակուրէն քեզի կտոր մը կուտան նէ՝ դիր Բիւլայիդ մէջը թող կենայ մինչև որ մէկ ուրիշ կերակուր մը բերեն նէ :

12 . Թան ( չօրպա ) կերած ատեն նրդ խմելիք մի ուղեր . սպասէ որ մէկ ուրիշ բան մ'ալ ուտես . խմելէդ առաջ անձեռոցքովդ ( փէշկիրովդ ) շրթունքդ ու մատերդ սրբէ , բերանդ բան կայ իբէն մի խմեր , խմելիք բանիդ վրայ շատ բարակ բարակ մի նայիր , մի մէյմը խըմեր մէյմը կայնիր , մէկ բերանդ առնելուդ՝ որչափ պիտի խմես նէ՝ խմէ :

13 . Խմած ատենդ աչքդ ասդին անդին մի ըներ , բաժակը ձեռքդ մի խօրաթեր , խմելէդ ետքը մի հեվար , ու նորէն բերանդ սրբէ :

14 . Թէպէտ հիմայ շատ սովորութիւն չէ մէկուն կենացը համար գինի խմել , բայց թէ որ մէկը քու կենացդ համար գինի խմէ նէ՝ գլուխդ

պարկեշտու թեամբ ծռելով շնորհա-  
կալ եղի՛ր անոր . սեղանակիցներուն  
մէկին կենացը համար խմեն նէ՛ անոր  
մէկ խոնարհու թիւն մը ըրէ , ետքը  
քու գինիդ խմէ . աղաքներուն չի վայ-  
լեր մարդու կենացը համար գինի խը-  
մել . աս բանը մինակ սեղանը գտնու-  
ող մեծերուն կը վայէ :

15 . Ամեն բանէն եվել չըլայ որ  
որկրամող աղաքներուն պէս շէքէրե-  
ղէն կամ ուրիշ ասոնց պէս բաներ  
կամ սրտուղ սեղանէն ձեռքդ առնես  
եւլաս կամ գրպանդ ( ճէպդ ) դնես :

Մաս առնելու խամանակը կամ Գարապան Տե-  
լը ինքոր պէտք է կենալ . ե պղաճները Տե՛լը  
Տե՛ղո՛ւ ի՞նչ պատի՛ պէտք է ընեն :

1 . Վարժապետին ինչ պատիւ ,  
ինչ յարգութիւն , ինչ երախտագի-  
տութիւն պիտի ցուցնես նէ , վերը  
ըսի հէրիք է :

2 . Քեզի դասին ատենը կամ գըպ-  
րատան մէջը ինչ տեղ կը ցուցունեն  
նէ , հոն նստէ՛ . խօսքի բռնելով , մըջ  
տեղով , հրելով , որ և իցէ կերպով ըն-  
կերիդ նեղութիւն տալով , մի անհան-  
գ իստ ըներ անիկայ :

3 . Թէ որ ընկերիդ զարնես , կամ

անոր մէկ պղտիկ չարութիւն մը ընես  
 նէ՛ անգգամ ըլլալդ ամենը կ'իմանան ,  
 վարժապետդ ալ հասկնալուն պէս քեզ  
 կը պատժէ :

4 . Պէտք ըլլայ նէ ընկերներուդ  
 պղտիկ պղտիկ բարերարութիւններ ըրէ ,  
 պակասութի մը կարելի է որ գործեն  
 նէ՛ քու կամօքդ մի երթար վարժա-  
 պետին իմացուներ , ընկերներուդ մէ-  
 կը սուտ տեղը վրայ յանցանք մը կը  
 ձրգէ նէ՛ մի բարկանալով արդարա-  
 ցուներ դուն քեզ , ու ան ընկերիդ  
 դէմ ոխ մի պահեր ներսիդիդ :

5 . Դասընկերիդ ու ընկերներուդ  
 հետ ալ անուշութեամբ ու մարդա-  
 վարութեամբ վարվէ . միշտ քաղցրա-  
 բարոյ եղիր , կռիւէն փախիր , ու ըն-  
 կերութիւն ըրած տղաքներուդ հետ  
 նայէ որ միշտ միաբանութիւն ընես :

6 . Աւրիշին համար ներողամիտ ե-  
 ղիր , բայց քեզի համար մի ըլլար նե-  
 րողամիտ , հապա խիստ ( սէրթ ) ե-  
 ղիր . միտքդ բեր քի մենք շատ հեղ  
 մեր կըռնակը գերան կայ տէ՛յի մտքեր-  
 նուս անգամ չենք անցուներ տէ՛ կ'եր-  
 թանք մեր եղբօրը աչքին մէջի շիւղը  
 կը տեսնանք . աս կտորին վրայ Ազով-  
 բոսը աղէկ կը գրէ : « Մարդս քովե-  
 նէն դժգոհ է՛ բայց իրմէ շատ գոհ

է . ուրիշին պակասութիւնը չորս աչքով կը նայի , իրենին գայ նէ կը կուրանայ . ափսոս՝ սասանկ է եկեր մարդըս՝ սասանկ կ'երթայ ։

7 . Վարժապետդ ընկերիդ սրդուզած ատենը կամ անոր պատիժ տալն իբէն ուրախանալդ հասկցուի նէ՝ գէշ տղայ է կ'ըսեն քեզի համար . անկէ 'ի զատ կը մեղանչես Աստուծոյ . վասն զի քրիստոնէից ընկերսիրութի կը վայլէ ։

8 . Ի՞նչ կերպով կարդալ գրեւպէտք է քեզի , ի՞նչ բանով կրթութիւնդ կատարելագործելու ես , ասոնք ինծի չիյնար քեզի ըսել , հասցա՝ միայն վարժապետդ տարիքիդ կը նայի , խելքիդ կարողութեանը կը նայի , գիւրին յառաջ ք'երթաս կոր մի , ի՞նչիտար բան գիտես՝ ան կը նայի . անկէ ետքը սորվելիք բանրդ ի՞նչ ճամբով պիտի սորվեցունէ նէ՝ ան պիտի որոշէ . քու պարտքրդ մինակ անիկայ է որ , անոր մտիկ ընես , ու ամեն կողմանէ անոր հնազանդիս ։

Ի՞նչ խաղ խաղալու է՝ ու ինչո՞ւ խաղալու է ։

1 . Արբոր խաղ մը կը խաղաս նէ՝ մի ստք կոխեր քի ուզած խաղդ խազան ընկերներդ . ինտո՞ր պիտի ընես քի

ընկերներդ քեզի հետ աեսու թիւն ընել ուղեն տէյի՝ պղտիկու թենէ նայէ որ սորվիս :

2 . Խաղացած ատենդ մէկը քեզ ցաւցունէ նէ՝ մի բարկանալով գանգատ ըներ , որ ցաւցունողը քեզի շընորհապարտ մնայ , ու ընկերներդ ալ քեզ աւելի սիրեն :

3 . Ըշխատանքի ու ճարտարութե վերաբերեալ խաղերը խելք հոգնեցունելու խաղերէն աղէկ են :

4 . Եայց կամ օդին գէշու թենէն կամ ձմեռ ըլլալուն և կամ կամք չի կոտրելու համար ուրիշ խաղեր հարկ կ'ըլլայ խաղալու նէ՝ չըլլայ որ նարտի ( խումարի ) վերաբերեալ խաղեր խաղաս :

5 . Խաղացած ատենդ յաղթեմ'տէյի մի ինքըզինքդ չափազանց հոգնեցուներ . յաղթես ալ նէ՝ յաղթըվիս ալ նէ մի ինքըզինքդ փոխեր . խաղ ըսածդ փաւրայ վաստըկելու համար հնարուած չէ , հապա կարգալէդ կամ աշխատութենէդ հոգնութիւն առնելու համար հնարուած է :

Խաղին մէջ բանդ յաջող կ'երթայ կոր նէ՝ մի մեծ խօսիր ուրիշները ծաղըր ընելու պէս :

6 . Եթու թեան ( իթմանի ) վերա

քերեալ խաղերուն մէջը մեծ զգուշութեամբ շարժէ, որ քեզի հետ խաղացողներուն վնաս մը չի տաս :

Թէ իր պոռնը լի՞ որիչին պոռնը ընկերակցութեան ( Ռճլիսի ) Ռջ Գպնոողը ո՞ր Բանը ընկերէ, ո՞ր Բանը ընկերէ :

1. Իմաստունին մէկը կ'ըսէ քի՛ ջանաս որ անուշ լեզու, խնտում երեսու համբերող ըլլաս. բարեկամներու գտունը երթաս նէ՛ հոն խօսք խօրաթա չի հանեն. հասպա ուրախութիւն քերես անոնց որ՝ ամեն մարդ քեզի հետ տեսութիւն ընել ուզէ :

2. Իստիկոնի մը ( տայրէի մը ) առջեւ երթաս տէ՛ դուռը գոց գտնաս նէ, կամացուկ մը զանրկ դուռը, մինչև որ ներսէն ձայն չի հանեն նէ՛ մի՛ բանար դուռը. ներս մտնաս նէ՛ դուռը գոցէ որ ուրիշին հարկ չըլլայ գոցելու, քեզի ալ աս ինչ անկիրթ տղայ է չըսեն մըտքովին. դուռը ամուր մի՛ գոցեր բանար, մանաւանդ՝ սենեակին մէջը քեզմէ վեր մարդ ըլլայ նէ :

3. Աւր տեղ կամ ի՛նչ սպասձառակ ըլլայ նէ ըլլայ, չի վայլած ատենը իրարու վրայ լի՛՞՞լլահներ ընելով վրադ խնդացընել մի՛ տար :

4. Վեղմէ վեր մարդ մը քովէդ կ'անցնի նէ՛ անոր ճամբայ տալու հաւմար քիչ մը ետեւօք քաշվէ . դուռնէ մը ներս մտնելու ատենդ է նէ՛ կայնէ որ առաջ ան մտնայ, սանդուխի մը վրայ կը գտնուիս նէ կայնէ որ պատին կողմէն ան ելլայ կամ իջնայ :

5. Մտնելու ժամանակ ( մէջլիսի ) մէջ գտնուած ատենդ մարդու մը առջեւէ անցնիս պիտի նէ՛ առաջ անոր դարձիւր, գլխով խոնարհուածիւն մը ըրէ, ետքը անցիր . բան մը տալու առնելու ըլլաս նէ՛ քաղաքավարուիլ ան է որ, ձեռքէդ ձեռնոցներդ ( էլ տիվէններդ ) հանես, անանկ տաս առնես . մէկը քեզի բան մը պատմելու ըլլայ նէ՛ ասդին անդին չի նայելով լուռ անոր պիտի մըտիկ ընես :

7. Տղայ մը իրմէ մեծ մարդուն բարեւ տուած ատենը ընտանեբար ( թէքլիֆսիղճէ ) անոր ձեռքը չի պիտի բռնէ, իրմէ վերին առջեւէն ձեռքը երկընցունելով բան չի պիտի տայ առնէ :

7. Տեղ մը մտնաս նէ՛ առաջ բարեւ տուր, ետքը ան տեղի մարդիկը նստեր են նէ՛ դուն ալ նստէ . կայներ են նէ՛ դուն ալ կայնէ :

8. Նստիս նէ՛ նստած տեղդ մի

փրութիւն , ոտքերըդ մի լարեր , մի եր-  
թար դար , շիտակ նստէ :

9 . Մեկերակցութեան ( մէճլիսի )  
մէջ գտնուող մարդոց բոլորտիքը սլ-  
տըտելով , չափազանց անոնց մօտենա-  
լով , աչքդ վրանին տնկելով կամ ա-  
նոնց աթուրին կրթընելով անոնք ան-  
հանգիստ մի ընէր :

10 . Մեկիրթ տղու բան է առաջ  
անցնելու համար ուրիշը հրել , մար-  
դու վրայ կրթընիլ , շունչը անոր տալ ,  
քրթին կամ բերանին առջեւէն ճրագ  
կամ ուրիշ բան մարդու տալ :

11 . Մանելու բան մը տեսնաս նէ  
նայէ տէյի մարդու չի ցուցունելէդ  
ի զատ , անանկ ըրէ որ մարդ ալ չի  
տեսնայ . գէշ հոտ մարդու առջեւ մի  
հաներ , մոմ մի մարեր , ու գէշ հոտ  
ուներցող բանը մի տար մէկին հոտուը-  
տալու համար :

12 . Խնչելն իբէն յանկարծ մէկին  
թաշկինակը ծաղը ընելու համար քա-  
շել , նստելն իբէն մէկուն աթուր  
ասդին առնել անիկայ ձգելու մտքով ,  
գրպանէն թաշկինակը , թուղթերը  
կամ ինչ որ կայ նէ դուրս քաշել , ա-  
տոնք ալ մեծ կոպիտութիւններ են .  
յանկարծ մարդ վախցունելու տղա-  
յական խորամանկութիւններ՝ խաղեր

ամենեւին չընես, վասն զի՝ ասանկ  
բաները կ'ըլլայ որ մարդու վնաս տան :

13. Տղաքներուն հետ տեղ մը գրտ-  
նուած ատենդ, հոն քեզմէ տարիքով  
մարդ կան աէ կը խորաթեն կոր նէ,  
մէկզմէկու հետ ձան ձուն չի հանելով  
խաղացէք :

14. Քեզմէ գաղտուկ եղած բա-  
նը հասկընալու մի պտըաիր. նամակին  
հասցէին, մէկին ձեռքի գրած նամա-  
կին, բաց ձգած գիրքին կամ թուղ-  
թին վրայ աչք մի անկեր, ամարդու-  
թիւն է :

15. Գետնէն գրուած թուղթ մը  
վերցունես նէ, մի կարդար անիկայ,  
վրան չի նայած գրասեղանին վրայ  
դիր, կամ ով որ ձգեր է նէ անոր  
տուր. նամակ կամ ուրիշ գրուած մը  
կրակը նետեր են նէ՝ կրակէն մի հա-  
ներ :

16. Սէկը տունը կամ սենեակը չե-  
ղած ատենը, ան տունը կամ ան սեն-  
եակին մէջը ոչ պահանոց ( տօլսպ )  
բայ, ոչ սնտուկի խորշ ( տէրէկ ) ոչ  
ալ՝ ուրիշ գոց բաներ, վասն զի մեծ  
անկրթութիւն է. ան տղան որ քա-  
ղաքավար է՝ գիրք մը անգամ չի պիտի  
բանայ տիրոջմէն հրաման չառած. բա-  
րեկամին տունը երթայ նէ՝ անոր պար-

տիզին ծաղիկները չի պիտի բրցունէ ,  
ծառին պըտուղներուն չի պիտի դըպ-  
չի :

Թէ իր գոնը ինչ մարդոց մը գոնն ուրիշ  
եւ կենալէ՞ Գէշ սովորութիւնները որոնք են :

1 . Մարդու առջեւ քերվտիլը՝ գըլ-  
խուն մազերը շիտկելը մարդավարուն  
չէ :

2 . Մատերովդ քիթդ մի խառներ ,  
գանեղիք բան է . խնչելու ըլլաս նէ  
Թաշկինակիդ մէջը խնչէ , կամ Թաշկի-  
նակիդ մէկ ծարովը քիթդ սրբէ , բայց՝  
զգոյշ կեցիր որ մարդ չի տեսնայ :

3 . Քիթդ խնչել պէտք ըլլալուն  
պէս՝ կամացուկ մը խնչէ՞ որ քիթդ չի  
վազէ , ու քովիններուդ գանեղիք չի  
գայ , առօթ բան է ուժով խնչելը ,  
փողի ( պոռուի ) պէս խօսեցունելը ու  
քիթը վեր քաշելը :

4 . Չեւքդ կամ Թաշկինակդ երե-  
սիդ բռնէ անանկ բռնգտան . Թուքե-  
րդ նստողներուն վրայ կամ քու վրայ  
մի ցաթկեցուներ . ուժով բռնգտա-  
լըն ալ անկրթութիւն է :

5 . Քովդ բռնգտացողին խեր ըլ-  
լայ մի ըսեր , մի միայն պարկեշտութիւն  
խոնարհութիւն մը կ'ընես նէ ըրէ :

6. Պատուհանէն վար կամ կրակին մէջ մի թուքներ . թաշկինակիդ մէջ թուք , վրան չի նայած գոցէ . ան տրդան որ քաղաքավար է նէ , ջանայ պիտի որ յաճախ ( սըխ ) չի թուքնէ , որչափ որ կարելի է նէ : Փորձուած է որ շատ մարդ առաւել սովորութի ընելուն յաճախ կը թուքնէ՝ քան թէ թուքը պարուն :

7. Եղունգներիդ մի կրծեր , գանկ վեր բաներու վրայ մի խօսիր , մի ան շքնորհք բառեր բերանդ առներ :

8. Ամենեւին մարդու առջեւ առջաներդ մի խառներ , եղունգներիդ մի կտրեր , ոտք ձեռք մի լուար , ու վերագ գլուխդ մի շտկեր :

9. Ձեռքերդ աղտոտ է նէ նայէ որ մէկին երեսին ձեռքին լաթերուն չի դպցունես , վասն զի՝ հէմ կոպիտութիւն ըրած կ'ըլլաս , հէմ ալ մարդուն լաթերը աղտոտելովդ կը բարկացունես անիկայ :

10. Կան անանկ անկիրթ մարդիկ որ դուրս ելլալէն ետքը ներս մտնալն փքէն վրանին շտկելով կը մտնան , որ որչափ մեծ ամօթ բան է :

11. Նայէ որ չի երեժկտաս , քթիդ տակէն բան չի երգես , ու չի սուլես ( րայլս չի չալես ) . տկարութե պատ

Ճառաւ կամ ուրիշ երեժկտացողի նա-  
յելով քեզի ալ երեժկտալ կուգայ նէ՝  
ձեռքդ կամ թաշկինակդ բերանդ բըռ-  
նէ անանկ երեժկտա՝ որ մարդ չի կը  
ուահէ :

12 . Սարգու մէջ մրաբելը , ոտքե-  
րը երկընցուներ տառ կելը քաղաքավա-  
րու թենէ դուրս բան է . ասոնք ընես  
նէ՝ սրտիդ նեղանալը կը ցըցուներ  
նստողներուն , որ շատ աղէկ է ասանկ  
ընելուդ՝ ելլաս երթաս ան տեղէն :

13 . Ոտքերդ զարներով անշնորհք  
շարժմունքներ ընելով բարձր ձայնով  
մի խնդար , ճակատդ մի կնճռեր , տա-  
րակուսածի պէս դէմքով մի նայիր բա-  
նի մը վրայ . վերջապէս ան կէտին ներ-  
սի դիդ ինտոր է նէ՝ դէմքիդ ցոյցքն  
ալ անոր նմանցուր՝ հակառակը մի ը-  
ներ որ ծաղրելի չըլլաս :

14 . Որի վրայ ըլլայ նէ ըլլայ , դուն  
ով եսի պէս նայելով խոժոռ աչքով  
մի նայիր , խոժոռ աչքով նայիլը մե-  
ծերուն կը վայլէ , իրենցմէ պզտիկ-  
ները սաստելու համար :

15 . Շատ կրակին մի մօտենար ,  
պէտք չեղած իբէն կրակը մի խառներ ,  
անդդ դուրսէն եկողներուն ու մտող-  
ներուն տուր :

16 . Կուզես որ հէմ կուպիտ չեքե-

ւաս հէմ ալ վտանգէ աղատ մնաս ,  
ուտելու ու խմելու բանէն ՚ի զատ բե-  
րանդդ բան մի առներ . շատ պատա-  
հեր է որ մարդ գամի պէս , ստակի  
պէս , ասեղի պէս , ու անոնց նման  
բաներ բերանը առեր է , ու իր ան-  
խոհեմութեանը զոհ է եղեր :

Խօսակցո-իւան Ձ արայի Տը Է՞նչ զգո-ւանա-  
լո- Բաներ կան :

1 . Իմաստունին մէկը կ'ըսէ որ՝ շա-  
տախօսութեան մի ինար , խօսքին տե-  
ղը չեղած մի խօսիր . շատախօս եղող  
զը մարդու նեղութիւն կը բերէ՝ մէ-  
կը անկէ չախորժիր , մէկ խելացի խօս-  
քին տեղը՝ հարիւր անխելք խօսքեր  
կ'ընէ :

2 . Սինչեւ որ քեզի բան մը չի հար-  
ցունեն նէ մի խօսիր , ու միշտ պա-  
տասխան տուած մարդուդ վայելելքին  
նայելով՝ պարոն , խաթուն , տուտու  
բսելով սկսէ խօսքդ . սրադ բան է հայ-  
րըս կուգայ կոր մի , եղբայրս հո՞ս է  
մի ըսել . հապա՛ խաթուն , հայրըս  
կուգայ կոր մի , տուտու , եղբայրըս  
հո՞ս է մի կը վայել ըսել :

3 . Միշտ զուարթերես եղիր , որ  
մարդոց հեա կը գանուիս նէ՝ անոնց

պատիւ ըրէ՛, միշտ մարդավարու թք  
ու զգուշու թեամբ խօսէ հետերնին .  
հետդ խօրատելու համար մէկը քովդ  
գայ նէ՛՝ ոտքի վրայ ելիր :

4 . Նայէ որ երկդիմի ( թէ՛ճնիս )  
հասկցուող բառերուն ետքը պարոն ,  
խաթուն , տուտու չըսես . օրինակի  
համար ի՛նչ ըսել է խող , պարոն , ո՛րն  
է գուռակ ո՛րն է էշ , խաթուն , մի ը-  
սեր . հապա՛ խող ի՛նչ ըսել է , պարոն ,  
խաթուն , ո՛րն է գուռակ ո՛րն է էշ ըսէ :

5 . Բարձր ձայնով մի խօրատեր ,  
մանաւանդ՝ քեզմէ վեր մարդու մը  
հետ խօրատելու ըլլասնէ՛՝ ինչ որ պի-  
տի ըսես նէ շատ պարկեշտութեամբ  
ըսէ , մէկի մը բան մը ըսելու ըլլաս  
նէ՛՝ անուներ մի տար , մի ըսեր շնորհա-  
կալ եմ պարոն Սուրէն , հապա՛ շնոր-  
հակալ եմ ըսէ մինակ , անուներ չի տա-  
լով :

6 . Մարդու ականջնիվար բան մի  
ըսեր , թէ որ քովդ մարդ նստեր է  
նէ , երկու հոգի ցած ձայնով մէկըդ-  
մէկու հետ կը խօրատեն կոր նէ , դուն  
բան մը պատճառ բռնէ հեռացիր քո  
վերնուն :

7 . Բեզմէ մեծին խօսքին մի խառ-  
նըվիր , մէկուն խօսքը մի կտրեր , քեզ  
մէ վեր մարդուն ըսածին ատանկ է

մի ըսեր . թէ որ աղէկ պիտի ըսես նէ՝  
 ընկերակցութեան ( մէճիսին ) մէջ ե-  
 զող մարդուն խօսքը ըրէ , չէ նէ մի ը-  
 ներ . որչափ որ կարելի է նէ՝ նայէ որ  
 դուն քու վրայովդ քիչ խօսիս , խըն-  
 դալու բան մը պատմես նէ՝ առաջ  
 դուն մի խնդար :

8 . Սարգը սուտ հանելէն գէշ բան  
 չի կայ , մանաւանդ երբ որ խօսուած  
 բանին վրայով քեզի բան մը չեն հար-  
 ցուներ նէ . գիտցած մէկ բանիդ վը-  
 րայով դուն ի՞նչ կ'ըսես տէյի տեղ  
 մը քեզի դառնայ մէկը հարցունէ  
 նէ , անանկ մէկ պատասխան մը  
 տուր որ , որի գէմ որ ճշմարտութիւնը  
 ձեռքէ չի ձգելով պիտի խօսիս նէ՝ ան  
 մարդը չի նեղանայ ամենեւին :

9 . Աւրիշը խնդացունելու կամ դուն  
 քեզ հանձարեղ ցըցունելու համար  
 մարդ մի ծաղրեր . շատ ատեն մարդ  
 խօրաթելուն կը զղջայ՝ բայց լուռ կե-  
 նալուն բնաւ չի զղջար . ընկերակիցնե-  
 րուդ հետ ալ կատակ ( շախայ ) կ'ընես  
 նէ՝ անանկ ըրէ որ սիրտերնին չի ծակես :

10 . կատակի ( շախայի ) համբերէ  
 ամեն մարդ միշտ քեզի պատուեն տե-  
 յի ուզես նէ , կամ պզտիկ կատակի  
 մը կամ անքաղաքավար բանի մը սըր-  
 դողելով ցուցունես նէ՝ մէկը քեզ չի  
 ուզեր :

11 . Բնական պակասութիւն մը ունեցող մարդու մը վրայ ծաղրելով մի խօսիր նոյն պակասութիւնը ունեցող մարդուն առջեւը . ուրեմն կուրին առջեւը կուրի խօսք , կաղին առջեւը կաղի խօսք մի ըներ :

12 . Խօսքդ ըլլայ տէյի երդում մի ըներ , մէկը պատմած բանիդ ասանկ չէ՛ ըսէ նէ՛ ես գիտէի որ անանկ է՛ ըսէ , գոցէ խօսքը :

13 . Սէկը արտմութեան բան մը պատմելն իբէն խնդալը , ըսել չուզած բանը մէկին ըսէ՛ ըսելը , ու անոր բերնէն անշնորհք պատասխան ահամայ հանել տալը մեծ անխոհեմութիւն է . մէկ տունին խօսքը մէկալ տունը տանելը , իմ մամըտացածս շիտակ է ըսելով պընդելը ( ինստ ըները ) ընկերին չուզած բաներուն խօսքը ըները , միշտ ասոնք ալ չի վայելլու բաներ են :

Ճամբան ժողովուրդը պեղանիք իսկ ուրիշ հասարակաց պեղանիք ինչպէս վարուելու է մարդոց հետ :

1 . Ինչպէս մասնաւոր ընկերութիւններուն մէջը՝ անանկ ալ ճամբան ժողովուրդը տեղուանքը՝ ու հասարակաց տեղուանքը բան կայ ըներու , բան կայ

չընելու : Ասանկ տեղուանքն ալ ան վայելուչ բաներ ընելու չէ . վասն զի՝ քեզ աղէկ մը չի ճանչցող մարդիկը քու վրայ եւս առաւել խիստ դատողութիւններ կ'ընեն :

2. Նամբան կամ ժուռ եկած ատենըդ բան մի ուտեր , ասիկայ միայն խիստ պղտիկ տղայոց ներելի բան է , վս զի միշտ ուտելիքի կարօտ են :

3. Կամաց խօսէ , քիչ խօսէ . մատով մարդ մի ցըցուներ , որի համար կը խօսիս կոր նէ՝ չըլլայ որ անունը տաս . վասն զի՝ կ'ըլլայ որ մէկը կը լսէ՝ ու կը կարծէ որ անիկայ ծաղրը ընելու ես ինկեր :

4. Քալելն իբէն գլուխդ շտտակ բռնէ՝ պարկեշտութեամբ առջեւըդ նայէ . շատ ճամբայ պիտի քալեսի պէս խրղըպնալով ձեռքերդ մի տանիր բերեր . ոչ չափազանց արտորնօք , ոչ ալ չափազանց ծանր քալէ . ձեռքերդ ետեւդ մի կապեր , ճեպդ ալ մի դըներ . մի ցաթկըռտեր , ոտքերդ մի քսեր , ոտքովդ առջեւուդ ետեւուդ բան մի նետեր :

5. Երբոր բազմութեան մը մէջ կը գտնուիս նէ՝ առաջ անցնիմ ըսելով առջեւըդ գտնուող մարդիկը մի հըրեր . խոնարհութիւնը ու պարկեշ-

տու թիւնը ան է որ՝ անանկ տեղու անք  
մարդու չի դպչես , միայն ձեռքդ քիչ  
մը առաջ տանիս քեզ պաշտպանելու  
համար :

6. Անկիրթ տղաքները՝ ի՞նչ կ'ըլ-  
լայ ըսելով՝ երբեմն պատուելու մար-  
դիկներուն հետ կատակ ( շախայ ) կ'ը-  
նեն , որ ան կատակը նախատանքի պէս  
է ան մարդուն :

7. Այն անանկ լիրբ տղաքներ որ  
մարդուն կոնակը կամացուկմը թուղթ  
կը փակցունեն , կաւիճով ( թէպէչե-  
րով ) բան կը գրեն , անցնող գարձողի  
վրայ ջուր կը սխմեն , ու ալ ուրիշ  
կերպ շատ չարութիւններ կ'ընեն՝ խո-  
հեմութիւնը ի՞նչ է , զգուշութիւնը  
ի՞նչ է չինայելով , որ մարդուն վրայ  
աս անշնորհք բաները կ'ընեն նէ՝ ան  
մարդը անանք չի կրնայ պատժել ալ  
նէ , աս ինչ գէշ տղաքներ են կ'ըսէ  
անշուշտ :

8. Ասանկ բաներ տեսած ատենդ  
խնդաս նէ , ըրածներնուն հաւներ ես  
տէյի կ'երեւայ , կ'երթայ անունըդ  
գրեթէ՝ անոնցինին հետ կը կտորի .  
անանկ է նէ երբոր ասանկ սիրտ ծա-  
կելու բաներ կը տեսնես նէ՝ մի խըն-  
դար որ ընողն ալ երես չառնէ , ա-  
սանկ բաները ձերերուն ու անկար

մարդիկներուն ընես նէ աւելի անըզ  
գամութիւն ու կոպիտութիւն է :

Թշուառ մարդուն վրայ ու անոր  
գժբաղդութեանը վրայ խնդալը ան-  
գութ մարդիկներուն մէջը մէկ մեծ  
սովորութիւն մըն է եղեր . բայց իորն  
գալնին շատ չիքշեր . վասն զի աս օր  
թշուառ մարդը նախատողը՝ վաղը ին-  
քը անկէ շատ ողորմելի պիտի ըլլայ :

9. Ղանչցած մէկըդ առջեւըդ ել-  
լայ ու քեզ բարեւէ նէ՝ սրբան շատ  
պատուաւոր մարդ է նէ՝ բարեւը  
այնչափ խոնարհութեամբ առ :

10. Ըս մարդը քովդ գայ ու ինչ  
բան հարցունէ նէ , քաղաքավարու-  
թեամբ պատասխան տուր . ու նայէ  
որ միշտ խօսքըդ պարոն , խաթուն ,  
տուտուով սկըսես , ու անկէ զատ  
ուած ատենդ ալ անոր նորէն խոնար-  
հութիւն մը ըրէ :

11. Միչև որ հիւանդ չըլլայ կամ  
հիւանդութենէ նոր ելած չըլլայ նէ՝  
քեզմէ վեր մարդուն որպիսութիւնը  
չես կրնար հարցուներ :

12. Ղամբան մի ետեւդ գառնար  
ուրիշին վրայ նայիր , վասն զի մար-  
դուն անանկ կուգայ որ անոր հագ-  
ուածքին կամ շարժուածքին կամ մէկ  
ըրածին պակասութիւն մը պիտի գըռ  
նաս :

13. յուռ գալու տեղուանքը քեզ մէ վեր մարդու մը քովէն քալես նէ՛ նայէ որ վար սեպուած կողմէն քալես . երեք հոգի մէկ տեղ ճամբայ երթան նէ պատուաւոր տեղը երկուքին մէջ տեղն է , անկէ ստորին տեղը մէջ տեղէն գացողին աջ կողմն է . երկու հոգի մէկ տեղ երթան նէ՛ պատուաւոր տեղը միշտ աջ կողմն է :

14. Ղամբան պարիսպի մը կամ տան մը քովէն երթալն իբէն՝ պատին մօտը վեր տեղն է . ուրիշ ատենը որ տեղը որ սուելի յարմար է նէ՛ ան տեղը մեղմէ վեր մարդուն կամ պատուել ուղած մարդիկներնուս պահելու եմք :

15. յուռ եկած ատենդ ընկերդ մի ձգեր՝ ու սուաջ երթար , ճամբու մը գլուխ եկած ատենդ պիտի դառնաս նէ՛ քովի մարդէդ սուաջ մի դառնար , դառնալն իբէն ալ մի կռնակրդ անոր դարձուներ , երեսըդ դարձուր :








1851





1684

2078

X875200

